

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ (ՀՊԱՀ) ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Ք

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- ✓ Մեթոդական խորհուրդը (այսուհետև՝ խորհուրդ) նշանակվում է ռեկտորի հրամանով տարբեր մասնագիտությունների առավել փորձառու դասախոսներից, երեք տարի ժամկետով:
- ✓ Մեթոդական խորհուրդը գործում է աշխատանքային պլանի համաձայն, որը հաստատում է ռեկտորը:
- ✓ Խորհուրդը հաշվետու է համալսարանի գիտական խորհրդին, որտեղ յուրաքանչյուր տարի տալիս է հաշվետվություն:

2. Պարտականությունները և իրավունքները

Մեթոդական խորհուրդը իրականացնում է հետևյալ աշխատանքները

- ✓ Գեկավարում է համալսարանի ուսումնամեթոդական աշխատանքները:
- ✓ Հսկողության է սահմանում իր ընդունված որոշումների կատարման նկատմամբ:
- ✓ Կազմակերպում է ուսումնամեթոդական գիտաժողովներ և սեմինարներ:
- ✓ Քննարկում է ուսումնական պլանների կատարման և կատարելագործման աշխատանքները:
- ✓ Ուսումնասիրում է տեսական և գործնական ուսուցման օրգանական կապը:
- ✓ Քննարկում է առարկաների և ուսումնաարտադրական պրակտիկաների ծրագրերը:
- ✓ Ուսումնասիրում է դասախոսությունների, լաբորատոր-գործնական պարապմունքների և սեմինարների անցկացման մեթոդիկան:
- ✓ Քննարկում և վերլուծում է ուսանողների դիպլոմային և կուրսային աշխատանքների (նախագծերի) թեմատիկան:
- ✓ Ուսումնասիրում և առաջարկություն է ներկայացնում դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և ուսումնամեթոդական գրականության մշակման և հրատարակման վերաբերյալ:

- ✓ Զննարկում է ֆակուլտետային մեթոդական հանձնաժողովների աշխատանքները:
- ✓ Զննարկում է ամբիոններում առարկաների բաշխումը և ներկայացնում է առաջարկություններ:
- ✓ Մեթոդական խորհուրդը իրավունք ունի հանձնարարություն տալ ֆակուլտետային մեթոդական հանձնաժողովներին, ամբիոններին և դասախոսներին ուսումնամեթոդական փաստաթղթերի մշակման վերաբերյալ, իր նիստերին հրավիրել համալսարանի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին և ներկայացուցիչներին ուսումնամեթոդական փաստաթղթերի մշակման համար և լուծել այլ մեթոդական հարցեր:
- ✓ Մեթոդական խորհրդի որոշումները, ռեկտորի կողմից այն հաստատելուց հետո, պարտադիր է կիրառման բոլոր ֆակուլտետների, ստորաբաժանումների, ամբիոնների և դասախոսների համար: